

2011-05


ՄԻ ԿԱՏՈՒ ՅԵ ԿՈՐԵԼ

ՊԱՏՄՎԱԾՔ
ՎՅՈՒԳՈՎՀԻ
ՍԿԱՐՆԵՐ
ԿԱՄԱՐՈՎՀԻ
ՓՈԽԱԴՐՈՒԹ.
Լ. ԹԱՐԳՅՈՒԼ.



SIRUS ՅԵՐԵՎԱՆ-1928.

891.715
4-73



Մի կապոյ չե կորեց

Մի փոքրիկ խրճիթում յերեք պառավ տատիկներ յին ապրում: Այս պառավսերը մի շեկլիկ, սիրուն կատու ևնեյին, վորին շատ եյին սիրում:

Կատիկ զդին նրանք մի բանտիկ եյին կապել: Մի նոգամ ես կատուն կորչում ե տանից:

Տատիկները դես են ընկնում, դես են ընկնում, բայց տնել չեն կարողանում: Ու զբա համար ել շատ տիրում և ու ափսոսում:

— Ի՞նչ անենք, վմբատեղ գտնենք մեր կատուն:

— Ցեկեք մի հայտարարություն խփենք դռանը, — առում ե տատիկներից մեկը հառաչելով, — ով գտնի ու երի, իր վարձն ստանա:

Այսպիս ել գրում են ու փակցնում դռանը.

«Մի կատու ՅԵ ԿՈՐԵԼ,

ԳՏՆՈՂԻՆ 5 ԿՈՊԵԿ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Այդ ըովեյին փողոցով անցնում են մի խումբ յերեաներ տեսնելով հայտարարությունը, մոտենում են ուանը և սկսում կարդալ:

— Ոհո . . . 5 կոպեկ, ինչ լավ ե, դե, յեկեք՝ ման անք, — բացականչում են նրանք ուրախացած:

— Մեր բակում ինչ-վոր կատու յեր ման գալիս, — ասում յերեխաներից մեկը:

— Մեր պարաեզում յերկու կատու խաղում եյին բար հետ:

— Յես ել քիչ առաջ գետափում մի կատու տեսա, որը գորտ եր բռնում:





Յեվ առանց մի ըոպե կորցնելու, յերեխաներից ամեն
մեկը մի կողմ ե վազ տալիս՝ կորսված կատուն գտնելու:
Ճանապարհին նրանց մի խումբ ուրիշ յերեխաներ են
պատահում:

— Ի՞նչ ե պատահել, — հարցնում են այս յերեխաները,
նրանց դեմք կտրելով:

— Մի կատու յե կորել, գտնողին 5 կոպեկ...

— Ի՞նչ եք ասում, - բացականցում են նորերն ու նրանք
ել սկսում են վազել այս ու այն կողմ կատուն գտնելու:

112
002
33532

Տատիկները գդալը նոր եյին մոտեցրել տաք սպասին
և ուղում եյին ճաշել յերբ դուռը ծեծեցին:

— Թըը՛թկ-թըը՛թկ:

— Ո՞վ ե՞:

— Մենք ենք, գտել ենք ձեր կատուն:

Մոտենում են յերկու յերեխա, նրանցից մեկը մի
սև բրդոտ մազերով, սարսափելի կատու յե բռնել:

— Ահա, համեցեք:

— Եղ մերը չի, — պատասխանում են տատիկները:


— Չերը չի . . . բա զրել եյիք, վոր մի կատու յե
կորել, մենք ել ենքան ման յեկանք, վոր 5 կոպեկ ստանանք...

— Մերը շեկլիկ ե, վզին ել՝ մի բանտիկ կապած:

— Հա... դե լավ... ներեցեք...

Տատիկները փակում են դուռը:





Յերեխաները շվարած մնում են:

— Ել ուր ենք քաշ տալիս ես կատուն, — հարցնում ե մեկը:

— Դեն գցիր, ե, — պատասխանում ե մյուսը:

Կատուն յերեխաների գրկիցն ազատվելով, չանգոելով դարպասի գլուխն ե բարձրանում:

Տատիկներն ուղռում եյին մոտենալ ճաշի սեղանին, յերբ հանկարծ՝

— Թրը՛խկ-թրը՛խկ:

— Ո՞վ ե:

Մենք ենք, գտել ենք ձեր կատուն, դե, շուտ բաց արեք, չանգուռմ ե մեր ձեռները, ոյ—ոյ...

Տատիկները բաց են տնում գուռը. մոտենում են յերկու ուրիշ յերեխա, նրանցից մեկը մի սե կատու յե գրկել:

— Համեցեք, ձեր կատուն...

— Եդ մերը չի, մերը շեկիկ ե, բանտիկով...

— Միենույն ե, — ասում են յերեխաները, — չարչարվել ենք, ման ենք յեկել, տվեք մեր 5 կոպեկը:

— Դե հայդա, ինչերիս ե պետք ուրիշի կատուն:

Տատիկները ջղայնացած շրխկացնում են դուռը:

Յերեխաները գլխիկոր հեռանում են:

Քիչ անց —

— Թրը՛խկ-թրը՛խկ:

— Ո՞վ ե:

— Կատուն... գտել ենք:

Բաց են անում. Դոան մոտ կանգնել են յերեք յերեխա, մի թավամազ, ճերմակ կատու բռնած:





— Անպիտանը փախչում եր, հազիվ ենք բռնել, վերցրեք:
 — Եդ մերը չի, պատասխանում են տապիկները, — հեռացեք:
 Յերեխաները փնթվնթում են հուզված, բայց դուռն արգեն շրխկմու և
 նրանց քթին, թողնում են կատուն և գատարկածեն հեռանում:
 Կատուն փորսող տալով՝ գարպասով ներս և մանում:
 Պառավերը դեռ չելին մոտեցել սեղանին, յերբ նորից՝
 — Թրը՛խկ-թրը՛խկ:
 — Ո՞վ ե:
 — Ցես:
 Բայց են անում. կանգնել ե մի աղջիկ՝ ձերմակ կատու գրկած:
 — Սա յե ձեր կատուն:
 — Վոչ, մերը շեկլիկ ե, բանտիկով:
 — Ուրեմն ձերը չի, բա վարձատրություն...
 — Անց կաց...

Ու շրխկացնում են դուռը:
 Բայց հազիվ են հեռանում դոնից, վոր մե-
 կը կրնկով շրփացնում և դուռը:
 Բաց են անում: Շեմքի մոտ կանգնած են
 յերեխաներ՝ մի-մի կատու բռնած, նրանց յե-
 տեից դալիս են նորերը՝ ելի կատուներով. բո-
 լոր կատուներն ել կեղտոտ են յերեւմ, վայրե-
 սի, բրդոտ:
 — Ահա ձեր կատուն, վերցրեք:





— Հարկավոր չի մեղ ոտարի կատու, տարեք, մեռը չի,
— իսկ սա՞:
— Բա սա՞:
Սա...
Սակայն կողմից յերեխաները կատուներ են մեկնում,
բոխրագույն, բծավոր, նաշխուն կատուներ:

Տատիկները հաղիկ ազատվում են նրանցից, մտնում
են ներս ու դուռը փակում:
Այն ինչ, բոլոր փողոցներում, բակերում, սանդուխ-
ուների, կտրների վրա մազլցում են յերեխաներն ու բռնում
որպանոր կատուներ:

Ամեն կողմից լսվում ե—

— Փիսո՞— փիսո՞— փիսի՞— փիսի՞...

Քաղաքումն ել կատու չի մնում, բոլորին բռնում են
ու բերում տատիկների մոտ: Յեզ յերք տատիկները հրա-
խարվում են ընդունելուց, յերեխաները կատուները բաց
են թողնում դռան մոտ ու հեռանում:

Տատիկների հարեան բակերում ահազին թվով կա-
տուներ են ման գալիս — քաղաքի բոլոր ծայրերից բերել
են ու լցրել:

Ամբողջ որը ծեծում են տատիկների դուռը, մի բո-
վե հանգիստ չեն տալիս, ծեծում են առավոտից մինչեւ
երեկո, ծեծում են նույնիսկ գիշերը:

Լսվում ե՝ ինչպես բակում մլավում և կռվում են
տար կատուները, կռվում են պատերի, կտրների վրա,
և դունների տակ, դռան յետեր:


Գիշերը մինչեւ լույս ամեն կողմից անսովոր մլավոց
ու փրփոց ե լսվում:

— Յեկեր՝ վաղը հայտնենք, վոր գտել ենք կատուն,
սոսում են տատիկները, — թե չե մի բոպե ել մեղ հանգիստ
են տալու:

Լուսաբացին դռան վրա փակցնում են մի նոր հայ-
ուարարություն.



Կարող Գրավել Ե





Առավոտյան, քաղաքի բոլոր մասերում հարայիրոց երարձրանում. կորել են բոլորի կատուները, և վոչ - վոք չի կարողանում հասկանալ, թե ուր են չքացել քաղաքի կատուները:

Նու կանայք և սպասուհիներ, ընկած թաղե-թաղ, փնտում են, կանչում իրենց կատուներին:

Ամեն կողմից լսվում ե—

«Փիսո՞ — փիսո՞ փիսո՞ փիսո՞...»

Մի կին տատիկների գուանը կարդում է մի հայտարարություն՝ «Կտտուն զտնվել ե», և սկսում է գուռը ծեծել:

— Ո՞վ ե, ձայնում են տատիկները:

Կտտու զանողը դժուք եք:

Վնչ:





— Ի՞նչպես թե վոչ. դուք ինքներդ եք դռանը հայտարարություն փակցրել. ավեք, մերն և կատուն։

— Ասում ենք՝ չենք դտել։

Իրար յետնից գալիս ու խմբվում են նորանոր կանայք և կանչում միաձայն։

— Դժւք եք դտել մեր կատուն, դե, ավեք, շուտ, մւր եք պահել։

Տատիկները հավատացնում են, վոր կատու չկանույնիսկ իրենցն ել և կորել ու չեն կարողանում գտնել։

Բայց կանայք ցույց են տալիս դռան հայտարարությունը և ասում։

— Դուք ինքներդ եք զրել վոր «կատու յե գըտնըվել», իսկ հիմա ուզում եք մեղ խաբել, հա...»

Հենց այդ ըովեյին ցանկապատի վրա յերեսում են յերկու կատու, վորոնք փփացնելով ու կատաղի մլավոցով պատրաստվում են իրար վրա հարձակվել։







Կանայք ուրախացած վազում են բռնելու, կատոնե-
րը փախչում են բակը, կանայք հետեւում են նրանց:

Յնկ ինչ են տեսնում—ամբարում, խոհանոցում, հաշտում լիքը
կատու:

Յեկեք, յեկեք, բռնեցեք, այստեղ են մեր կատուները,
կտնչում են կանայք:

Վազում, գալիս են յերեխաները, դռնապանները, խոհաբարները, կառապանները՝ կատու
բռնելու:

Աղմուկ, աղաղակ, իրարանցում. հավաքվում ե ամբոխը, հնալով, շուապ հասնում ե հրշեջ
խումբը՝ տակառները լիքը ձըով, կարծում են, թե տունը հրդեհ ե ընկել:

Կանայք անմիջապես խնդրում են հրշեջների սանդուխները, բարձրանում կտուրը և կա-
տուները բռնում:


Խեղճ տատիկները չեն իմանում՝ ուր պահ մտնեն: Աղմուկ-աղաղակից ճոճվում ե տունը,
կարծես ես ե՞ փուլ և գալու:

Յերբ բոլոր կատուները բռնում են ու հե-
ռանում, և յերբ ամեն ինչ խաղաղվում ե ար-
դեն, հանկարծ, վորտեղից-վորտեղ յերեւում ե
տատիկների շեկիկ կատուն, բանափկը վզին. Նա
գալիս ե, ծուլ-ծույլ բարձրանում և աթոռի
վրա և սկսում թաթերը լիզել:

Իսկ թե վորտեղից եր գալիս, այդ վոչ վոք
չխմացավ:



ԳԻՆԸ 35 ԿՈՊ.





ԼՈՒՅՍ Ե ՏԵՍՆՈՒՄ ՀԱԽՆ ԼԺԿ ՍՈՑԴԱՍԴԼԿՎԱՐՁՈՒԹՅԱՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ
ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԽՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՄԲ № 39

Պետհրատան № 861

Գրառեպիվար № 1033 թ.
գրադադարան Հայոցի զբանագիր 2-րդ տակ. պատ. № 48

տիրաժ: 4000







ՀՀ Ազգային գրադարան

NL0386964

51